

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»
ԿԵՆՍԱՔԱՂԱՔԻ ԽԱՆՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»
ԿԵՆՍԱՔԱՂԱՔԻ ԽԱՆՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»
ԿԵՆՍԱՔԱՂԱՔԻ ԽԱՆՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՌԱՋԱԾԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԿԱՐԾԻՔ

Հեղինե Խաժակի Գևորգյանի «Պրոտոնային F.F.-ԱԵՖազի և մրցնաթթուջրածինլիազի փոխազդեցությունը ածխածնի տարբեր աղբյուրների և դրանց խառնուրդների խմորման ընթացքում» թեմայով Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը ըննարկվել և տրվել է կարծիք ՀՀ ԳԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ կենսաքիմիայի խնստիտուտի գիտխորհրդի 2021թ. օգոստոսի 19-ի թիվ 11 նիստում: Նիստին մասնակցում էին կ.գ.դ. Ս.Գ. Չախյանը, կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ս. Սիմոնյանը, կ.գ.դ. Ս.Ս. Մարդանյանը, կ.գ.դ. Ս.Ս. Արքահամյանը, կ.գ.թ., դոցենտ Հ.Լ. Հայրապետյանը, կ.գ.թ., դոցենտ Ա.Անտոնյանը, կ.գ.թ. Գ. Գ. Գյուլխանդանյանը, կ.գ.թ. Վ.Կ. Գասպարյանը, կ.գ.թ. Թ.Ե. Սեֆերյանը, կ.գ.թ. Ի.Կ. Սահակյանը, կ.գ.թ. Զ.Խ. Պարոնյանը, կ.գ.թ. Ք. Դանիելյանը, կ.գ.թ., դոցենտ Լ. Առաքելյանը, կ.գ.թ. Վ.Հ. Քնարյանը:

Քննարկման ընթացքում տրվեցին հարցեր, որոնց ատենախոսը տվեց սպառիչ պատասխաններ: Ելույթ ունեցան՝ կ.գ.դ. Ս.Ս. Մարդանյանը, կ.գ.դ., պրոֆ. Մ. Ա. Սիմոնյանը, կ.գ.թ. Գ. Գյուլխանդանյանը, կ.գ.թ., դոցենտ Ա. Անտոնյանը, որոնք ընդգծեցին աշխատանքի հիմնական արժանիքները՝ նորույթը և գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ներկայում խմորման գործընթացի կիրառական ոլորտները ընդլայնվում են, ինչը հնարավորություն է տալիս տարբեր միջավայրերի և համապատասխան օրգանիզմների օպտագործման միջոցով ստանալ ցանկալի վերջնանյութեր:

Վերջին տարիներին գիտական շատ խմբերի ուշադրությունը սևեռվել է խմորման միջոցով էներգիայի այլընտրանքային աղբյուրների ստացման վրա, քանի որ հանածո վառելիքի պաշարները աստիճանաբար սպառվում են: Տարբեր մանրէների կողմից խմորման արդյունքում առաջանում են էթանոլ, բուրանոլ, համարվում են խոստումնալից կենսավառելիքներ

ապագայի համար: H.-ը՝ որպես կենսավառելիք, ունի բազմաթիվ առավելություններ՝ վերականգնվող է, ունի բարձր արդյունավետություն՝ 142 կօ գ՝, թունավոր չէ, և այրման ընթացքում օդի աղտոտում տեղի չի ունենում:

Բակտերիաներում ածխածնի խառն աղբյուրներից Հ.-ի ստացման ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրությունը ներկայում մեծ է, քանի որ մեծ քանակով խառն աղբյուրներ առկա են արդյունաբերական, գյուղատնտեսական և այլ օրգանական ածխածնի աղբյուրներ պարունակող թափոններում: Ածխածնի տարբեր աղբյուրների համախմբման կենսաբիմիական և կենսաէներգետիկական բնութագրերի որոշումը կարևոր է Հ.-ի և բակտերիաների կենսազանգվածի արտադրության բարելավման համար:

Escherichia coli-ն H. արտադրող բակտերիաներից է, որն ունակ է յուրացնել ածխածնի աղբյուրներ լայն տիրույթ և իրականացնել խառն յուրացնել ածխածնի աղբյուրներ լայն տիրույթ և իրականացնել խմորում: Այս բակտերիան ունակ է յուրացնել ածխածնի տարբեր աղբյուրները ոչ միայն առանձին, այլ նաև խառնություններում: Վերջիններիս համախմբման ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն հիմնարար, այլ նաև Հ.-ի մեծածավալ արտադրությունում կիրառական տեսանկյունից:

Հ.-ի նյութափոխանակությունն իրականանում է թաղանթակապ չորս հիդրօքենագ (Հիդ) ֆերմենտների միջոցով. որոնք իրականացնում են Հ.-ի արտադրություն կամ օրսիդացում՝ կախված խմորման պայմաններից: Հ.-ի արտադրության բարելավման նպատակով առաջնային է Հ.-ի նյութափոխանակությանը մասնակցող ֆերմենտների և այլ թաղանթակապ սպիտակուցների փոխազդեցության ուսումնասիրումը: Հիդ-ների գործունեության արդյունքում թաղանթի երկայնքով առաջանում է ջրածնային ցիկլ. որը, ըստ վերջերս կատարված բազմաթիվ հետազոտությունների, ցիկլը ըստ վերջերս կատարված բազմաթիվ հետազոտությունների և կապված է պրոտոնային ցիկլի հետ: Այս փոխազդեցությունը իրականանում է Հ.-ի արտադրությանը մասնակցող Հիդ-ների և պրոտոնային F.F.-ԱԵՖազի միջև և ուղղված է բակտերիաներում պրոտոնաշարժ ուժի առաջացմանը, և ուղղված է բակտերիաներում պրոտոնաշարժ ուժի առաջացմանը, և ուղղված է բակտերիաներում պրոտոնակության պահպանմանը: Նախկինում հետևաբար նաև նրանց կենսունակության պահպանմանը: Նախկինում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ K+ իոնները ունեն կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ K+ իոնները ունեն կատարված ուսումնասիրությունները պահպանակալի ազդեցություն պրոտոնային ԱԵՖազի ակտիվության վրա: Նշանակալի ազդեցություն պրոտոնային ԱԵՖազի ակտիվության վրա: Մասնավորապես, Հիդ-4-ը, K+ իոններ տեղափոխող Trk համակարգը և F.F.-ԱԵՖազը փոխազդում են զյուկողի խմորման պայմաններում աճման միջավայրի pH 7.5 արժեքում:

Ներկայում ուսումնասիրությունները ուղղված են թաղանթում համալիրներ կազմող սպիտակուցների և ֆերմենտների փոխազդեցության արդյունքում էներգիայի փոխանցման ուսումնասիրությանը և դրանցում էրկթիոլ-էրկսուլֆիդ փոխանակության դերի բացահայտմանը: Ցույց է տրվել, որ էրկթիոլ-էրկսուլֆիդ փոխանակման միջոցով էներգիան փոխանցվում է ԱԵՖազից դեպի լուծելի էրկրորդային տեղափոխիչներ զյուկողի խմորման պայմաններում: Տարբեր հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ

Հիդ-ները նշանակալի դեր ունեն պրոտոնաշարժ ուժի առաջացման գործընթացում: Դեռ ավելին, կարևորվում է մրջնաթթուջրածինիազ սինթեզի կարգավորման ուսումնասիրումը, ինչպես նաև համալիրի կազմում գտնվող ֆերմենտների և թաղանթակապ այլ սպիտակուցների փոխազդեցության արդյունքում պրոտոնային գրադիենտի առաջացման և թաղանթային պոտենցիալի կարգավորման բացահայտումը:

Այսպիսով, ածխածնի խառն աղբյուրների (զյուկող, զիցերոլ, մրջնաթթու) խմորման պայմաններում կենսաթիմիական և կենսակենթակական բնութագրիչների որոշումը կիրառելի է տարբեր թափոնների և դրանց խառնուրդների որպես ածխածնի աղբյուրների, կիրառման դեպքում կենսազանգվածի և H₋ի արտադրության կարգավորման բարելավման համար:

Առենախոսության գիտական նորույթը: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ *E. coli*-ն ունակ է աճել յուրացնելով և համախմորելով զյուկողի, պիտի և մրջնաթթվի խառնուրդը ածման միջավայրի pH-ի տարբեր պիտի և մրջնաթթվի կոնցենտրացիան ունեցել է դրական ազդեցություն արտարին մրջնաթթվի կոնցենտրացիան ունեցել է դրական ազդեցություն հիմնային և թույլ թթվային pH-ներում: Ցույց է տրվել, որ ՄՁԼ համալիրը հիմնային և թույլ թթվային pH-ներում: Ցույց է տրվել, որ *E. coli* բակտերիաների ածման տեսակարար արագության արժեքի վրա թույլ բակտերիաների ածման տեսակարար արագության արժեքի վրա թույլ հիմնային և թույլ թթվային pH-ներում: Ցույց է տրվել, որ ՄՁԼ համալիրը հիմնային և թույլ թթվային pH-ներում: Ցույց է տրվել, որ *E. coli* բակտերիաների կենսազանգվածի ստացման և բարելավման համար:

Ցույց է տրվել, որ մրջնաթթուն յուրացվել է ածման լազ փուլում, սակայն չի հանգեցրել H₋ի արտադրության և մասնակցել է H₋ի նյութափոխանակությանը մասնակցող ֆերմենտների սինթեզի և ակտիվության կարգավորմանը: Գլիցերոլի յուրացման արագությունը զյուկողի հետ համախմորման պայմաններում եղել է ավելի բարձր pH 7.5-ում: Ցույց է տրվել, որ *E. coli* բակտերիաների ածման 72-րդ ժամից հետո, եթե ածման միջավայրում հայտնաբերվել է զիցերոլը որպես միակ խմորվող սուրստրատ, տեղի է ունեցել առաջացող թրուների հարաբերակցության փոփոխություն, ինչն ուղղված է եղել բջիջների օրսիդավերականգնողական վիճակի կարգավորմանը և պրոտոնաշարժ ուժի ձևափորմանը:

Բացահայտվել է, որ թաղանթակապ ֆերմենտները F.F.-ԱԵՖազը, ՄԴՀ և Հիդ ֆերմենտները փոխազդում են զյուկողի, զիցերոլի և մրջնաթթվի խառնուրդի խմորման պայմաններում pH 7.5-ում և pH 5.5-ում: Հայտնաբերվել է, որ թթվային պայմաններում K⁺ իոններ տեղափոխող համակարգը ունի կարևոր նշանակություն ՄՁԼ համալիրի բաղադրիչների և պրոտոնային կարևոր նշանակություն ՄՁԼ համալիրի բաղադրիչների և պրոտոնային կարևոր նշանակություն համար: Ստացված արդյունքները վկայում են, որ ԱԵՖազի փոխազդեցության համար: Ստացված արդյունքները վկայում են, որ վերը նշված փոխազդեցություններն իրականանում են թիոլ խմբերի երկրիու-

երկսուլֆիդ անցման շնորհիվ: Այս մեխանիզմի ուսումնասիրումը կարևոր է ածխածնի խառն աղբյուրների խմորման գործընթացի կարգավորման համար:

Ցույց է տրվել, որ FhIA կարգավորիչ սպիտակուցն ունի կարևոր նշանակություն պրոտոնային ԱԵՖազային ակտիվության և ΔpH-ի կարգավորման համար բակտերիաների աճման 20-րդ և 72-րդ ժամերում: Բացի այդ, FhIA-ը կարգավորում է խմորման ելանյութերի յուրացումը և վերջնանյութերի արտադրությունը:

Ատենախոսության բովանդակությունը և ձևավորման զնահատականը:
Հեղինե Խաժակի Գևորգյանի ատենախոսական աշխատանքը կազմված է գրական ակնարկ, հետազոտման նյութեր և մեթոդներ, հետազոտությունների ընդունքներ և դրանց քննարկում բաժիններից, ինչպես նաև արդյունքների և օգտագործված գրականության ցանկից:

Ներածական և խնդրի դրվածք բաժիններում հայցորդի կողմից լիովին հիմնավորված են աշխատանքի արդիականությունը, գիտական նորույթը, աշխատանքի նպատակն ու խնդիրները, հետազոտման եղանակների ընտրությունը և արդյունքների կիրառական նշանակությունը:

Գրական ակնարկում հեղինակի կողմից կատարված է ուսումնասիրվող նյութի վերաբերյալ գիտական տվյալների և արդյունքների բազմակողմանի վերլուծություն: Հետազոտության նյութեր և մեթոդներ բաժնում մանրամասն նկարագրված են ատենախոսի կողմից կիրառված մանրէաբանական և կենսաքիմիական ժամանակակից մեթոդները:

Արդյունքների նկարագրման և քննարկման բաժիններում ներկայացված են հեղինակի կողմից կատարված ծավալուն հետազոտական և փորձարարական աշխատանքի հիման վրա ստացված տվյալները և դրանց քննարկումը:

Ներկայացված աշխատանքում առաջին անգամ ուսումնասիրվել է *E. coli*-ում ածխածնի խառն աղբյուրների՝ զյուկողի, զյուցերոլի և մրջնաթթվի խմորման պայմաններում մրջնաթթուղեի իդրոգենազների, Հիդ ֆերմենտների և F.F.-ԱԵՖազի փոխազդեցության մեխանիզմները միջավայրի pH 5.5, 6.5 և 7.5 արժեքներում, ինչպես նաև այդ փոխազդեցության նշանակությունը բակտերիաների աճման և պրոտոնաշարժ ուժի առաջացման գործընթացում:

Ցույց է տրվել, որ pH 7.5-ը ամենաբարենպաստ պայմանն է *E. coli* բակտերիաների աճման վերը նշված պայմաններում: FhIA կարգավորիչ սպիտակուցը ունի փոխատուցողական նշանակություն աճման տեսակարար արագության վրա պրոտոնային ԱԵՖազի արգելակման պայմաններում pH 7.5-ում ուսումնասիրված բոլոր պայմաններում և 6.5-ում 10 մՄ մրջնաթթվի ավելացման դեպքում: pH 6.5-ում Հիդ և ՍԴՀ ֆերմենտներն ունեն կարևոր դեր բակտերիաների աճման վրա առանձին կամ ՄՁԼ համալիրի կազմում:

E. coli-ն համախմորում է զյուկողի, զյուցերոլի խառնուրդը մրջնաթթվի ներկայությամբ աճման միջավայրի pH 5.5, 6.5 և 7.5 արժեքներում: Ըստ որում, աճման սկզբնական ժամերին յուրացվում է մրջնաթթուն: Դեռ ավելին,

նյութափոխանակության հիմնական բնութագրերը՝ սուբստրատների յուրացման և վերջնանյութերի առաջացման արագությունները համեմատաբար բարձր են pH 7.5-ում: Խմբման արդյունքում առաջացող հիմնական արգասիքը բացախաթթուն է, ինչի արտադրման ժամանակ սինթեզվում է բարձրաէներգետիկ մոլեկուլ: Եթանոլը և սաթաթթուն առաջանում են համեմատաբար բարձր քանակությամբ, որպեսզի կարգավորվի բջջի օքսիդավերականգնողական վիճակը:

F_oF_o-ԱԵՖազի, ՄԴՀ և Հիդ ֆերմենտների միջև հիմնական փոխազդեցությունը իրականանում է pH 7.5-ում և pH 5.5-ում: Ավելին, բացահայտվել է K⁺ իոնների ազդեցությունը՝ կախված pH-ից և մուտանտից: Հայտնաբերվել է արտաքշաջին pH-ի և ՄԴՀ-ների դերը F_oF_o-ԱԵՖազային ակտիվության վրա: Հատկապես ցույց է տրվել ՄԴՀ-ների կարևոր և հիմնական ազդեցությունը, եթե արտաքշաջին pH-ը ցածր է: Դեռ ավելին, բոլոր պայմաններում F_oF_o-ԱԵՖազը և Հիդ ֆերմենտները փոխլրացնում են միմյանց պայմաններում F_oF_o-ԱԵՖազը և Հիդ ֆերմենտները փոխլրացնում են միմյանց pH-ի տեղափոխության համար: Ստացված տվյալները առաջարկում են նոր մոտեցում K⁺ իոններից կախված թաղանթային սպիտակուցների մոտեցում՝ կախված թաղանթային սպիտակուցների փոխազդեցության վերաբերյալ: Մասնավորապես, ցույց է տրվել ցածր pH-ում փոխազդեցության վերաբերյալ: Մասնավորապես, ցույց է տրվել ցածր pH-ում F_oF_o-ԱԵՖազի և ՄՁԼ համալիրների փոխազդեցություն՝ կախված K⁺ իոններ տեղափոխող համակարգից:

Ցույց է տրվել, որ pH 5.5-ում մրջնաթթվի և K⁺ իոնների խթանիչ ազդեցությունը պրոտոնային ԱԵՖազի ակտիվության վրա իրականանում է անուղղակի՝ հասանելի թիոլ խմբերի քանակի նվազեցմամբ և ՄԴՀ-ի ու F_oF_o-անուղղակի՝ հասանելի թիոլ խմբերի քանակի նվազեցմամբ և ՄԴՀ-ի ու F_oF_o-ի միջև երկթիոլ-երկսուլֆիդի փոխանակման միջոցով: Մինչդեռ, հիմնային pH-ում մրջնաթթվի խթանիչ ազդեցությունը F_oF_o-ԱԵՖազի ակտիվության վրա միջնորդված չէ թիոլ խմբերի վերօք կարգավիճակով:

Առաջացող թթուների քանակության և պրոտոնային ԱԵՖազային ակտիվության մեջ գործում է փոխազդեցություն, ինչն ուղղված է ΔpH-ի կարգավորմանը և հետևաբար, Δp-ի պահպանմանը: ΔΨ-ն եղել է հաստատուն E. coli բակտերիաների աճման ընթացքում: Դեռ ավելին, FhlA կարգավորիչ սպիտակուցը չունի էական նշանակություն և պահպանում է առաջացման գործում:

Կարևոր է նշել նաև, որ արտաքին մրջնաթթվի յուրացումն աճման լազ փուլում չի հանգեցնում H₊-ի արտադրության և հավանական է, որ ունի կարգավորիչ նշանակություն H₊-ի նյութափոխանակությանը մասնակցող ֆերմենտների համար: Առաջացող թթուների հարաբերակցության ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ բակտերիային բջիջները պատում են ΔpH-ը քացախաթթու-մրջնաթթու-կաթնաթթու փոխանակման միջոցով pH 7.5-ում: Արտաքին մրջնաթթուն ունեցել է խթանիչ ազդեցություն պրոտոնային ԱԵՖազային ակտիվության վրա, ինչը հիմք է հանդիսանում ենթադրելու, որ զոյլություն ունի ուղղակի կամ անուղղակի կապ, ինչը անկախ է աճման ժամանակից: Հատակ ցույց է տրվել, որ FhlA-ը ունի կարևոր աճման ժամանակից: Հատակ ցույց է տրվել, որ FhlA-ը ունի կարևոր նշանակություն F_oF_o-ԱԵՖազային ակտիվության և ΔpH-ի կարգավորման

համար, ինչից ենթադրվում է, որ ՄԶԼ համալիրի բաղադրիչները մասնակցում են Ճր-ի առաջացմանը:

Ատենախոսության եզրահանգումները տրամաբանորեն հետևում են փորձերի արդյունքներից և բազմակողմանի հիմնավորված են:

Ատենախոսության գործնական արժեքը:

Ստացված արդյունքները տալիս են նոր տեղեկություն բակտերիայի նյութափոխանակության և պրոտոնաշարժ ուժի առաջացման վերաբերյալ: Խմորման ընթացքում առաջացող թրուների հարաբերակցության փոփոխությունը թույլ է տալիս առաջ բերել նոր մոտեցում Հ.-ի արտադրության կարգավորման համար: Թաղանթակապ ֆերմնենտների և սպիտակուցների փոխազդեցության մեխանիզմների բացահայտումը կիրառական է ինչպես ել հիմնարար գիտական հետազոտություններում, այնպես ել կենսատեխնոլոգիական տարրեր ոլորտներում:

Չեզ բերված տվյալները կարևոր են հասկանալու, թե ինչպես են բակտերիաները պահպանում իրենց կենսունակությունը ածխածնի աղբյուրների խառնուրդի համախմբման պայմաններում: Տվյալները կիրառելի են հետազում թափոնների՝ որպես ածխածնի խառն աղբյուրների կիրառելի մեծածավալ արտադրության բարելավման համար: Դեռ ավելին, ի մեծածավալ արտադրության բարելավման համար: Դեռ ավելին, կենսարիմիական և կենսակերպետիկական բնութագրերի կարգավորումը կնպաստի խմորման գործնթացի բարելավմանը և ցանկալի վերջնանյութի ելքի մեծացմանը:

Աեղմագրի համապատասխանությունը ատենախոսության հիմնական դրույթներին: Հեղինակի կողմից ստացված արդյունքները տպագրվել են ազդեցության գործակցով միջազգային գիտական ամսագրերում և միջազգային գիտաժողովների թեղիներում: Աեղմագրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Այս ամենով հանդերձ աշխատանքը գերծ չէ որոշ թերություններից, այսպես

- Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները կարելի եք միավորել, որի արդյունքում դրանք կլինեին ավելի կոմպակտ և հստակ:
- Եզրակացությունները ոճական առումով կարելի եք տալ ավելի հակիրճ տեսրով, առանց սկզբնամասում բերված բայերի առկայության:
- Աշխատանքում առկա են ոճական և ուղղագրական սխալներ, որոնք ցանկացած աշխատանքի անխուսափելի ուղեկիցն են և որոնց բացակայության դեպքում աշխատանքը, կլիներ առավել հասկանալի և անթերի:

Եզրակացություն: Հաշվի առնելով վերը նշվածը, կարելի է եզրակացնել, որ Հեղինե Խաժակի Գնորգյանի կողմից ներկայացված «Պրոտոնային F.F.-ԱԵՖսազի և մրջնաթթութրածինիազի փոխազդեցությունը ածխածնի

տարբեր աղբյուրների և դրանց խառնուրդների խմբման ընթացքում» թեկնածուական ատենախոսական աշխատանքը հիմնավոր և ավարտուն զիտագործնական ուսումնասիրություն է: Այն բավարարում է ՀՀ պատական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետով ուժ զիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետով թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Գ.00.04 - «Կենսաքիմիա» մասնագիտությամբ կենսաբանական զիտությունների թեկնածուի զիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի զիտխորհրդի նիստում (արձանագրություն թիվ 11 19 օգոստոսի 2021թ.):

Նիստի նախագահ, ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի
անվան կենսաքիմիայի ինստիտուտի
զիտական խորհրդի նախագահ, Կ.Պ.Պ.

Ս. Գ. Չախյան



Նիստի քարտուղար,
զիտական խորհրդի քարտուղար.
կ.գ.թ., դոցենտ

Հ. Լ. Հայրապետյան